

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Անհրաժեշտությունը

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է՝ Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (պղնձի և մոլիբդենի խտանյութ, ֆեռոմոլիբդեն) արտաքին առևտուրը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Վերջին տարիներին համաշխարհային շուկայում արժանագրվում է գունավոր մետաղների բորսայական գների աճ, ինչը բարենպաստ պայմաններ են ստեղծում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների աճի և ոլորտի հետագա զարգացման համար:

Մասնավորապես՝ սկսած 2020 թվականի ապրիլից համաշխարհային շուկայում գրանցվում է պղնձի միջազգային գնի աճ կամ կայուն բարձր գին (պղնձի գինը միջազգային բորսայում սկսած 2020 թվականի դեկտեմբերից գերազանցում է 7,500 ԱՄՆ դոլարը, իսկ ներկայումս այն կազմում է 9,225 ԱՄՆ դոլար: Մոլիբդենը սկսած 2018 թվականի ապրիլից գրանցում է կայուն գին՝ 24,000 ԱՄՆ դոլարի չափով:

Ըստ մեր ուսումնասիրությունների՝ ՀՀ պղնձի հանքերի զգալի մասը շահութաբեր է 5300 ԱՄՆ դոլար գնի պարագայում ու նույնիսկ 7500 ԱՄՆ դոլարի պարագայում հաշվարկված պետական տուրքի վճարումից հետո ոլորտը մնում է բավական շահութաբեր:

Վերը նշված գնային արտաքին պահանջարկը բարենպաստ պայմաններ է ստեղծում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների աճի և ոլորտի հետագա զարգացման համար, ինչը կարող է ամուր անխաղաղներ ստեղծել ոլորտի հետագա արդիականացման և միջազգային պահանջներին համապատասխան հանքարդյունաբերական և լեռնամետալուրգիական համալիր ձևավորելու համար:

Մասնավորապես նպատակ է դրվում կարգավորել հետևյալը՝

- Երկրի ընդերքի շահագործումից գեներացվող բարձր շահույթից ուղղել նշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարական ակտիվների զարգացմանը և արդյունաբերական արժեշտանքների խորացմանը: Մասնավորապես, նախատեսվում է խորացնել պղնձի մշակման արժեշտանք՝ նախնական փուլում հիմնելով բարձր մաքրության կատոդային պղնձի արտադրություն, իսկ այնուհետև խթանել հարակից արտադրատեսակների էկոհամակարգի արագ զարգացմանը:
- Խթանել հանքերի առավել արդյունավետ շահագործմանը և գործող հանքավայրերի արտադրողականության բարձրացմանը՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ:
- Խթանել շրջակա միջավայրի նկատմամբ առավել պատասխանատու հանքարդյունաբերությանը՝ հնարավորինս նվազեցնելով վնասակար արտանետումները:

Նախագիծը հանդիսանում է ժամանակավոր լուծում՝ մինչև ոլորտին վերաբերող քաղաքականության ամբողջական և խորքային վերանայումը՝ բոլոր ոլորտային գերատեսչությունների ներգրավմամբ:

Երկարաժամկետ հատվածում նախատեսվում է վերանայել ոլորտին վերաբերող հարկային քաղաքականությունը՝ երկրի ընդերքի օգտագործումից գեներացվող գերշահույթի արդյունավետ հարկմունքը ապահովելու համար և ստեղծել «Սուվերեն Հարստության Ֆոնդ» ներդրումային հիմնադրամ՝ որտեղ կուղղվի նշված քաղաքականության վերանայումից առաջացող եկամուտը: Վերոնշյալ նպատակների իրականացումը լինելու է հիմնադրամի առաքելությունը: Բազմաթիվ երկրեր արդեն իսկ ունեն նմանօրինակ հիմնադրամներ՝ որոնք զբաղվում են ընդերքի շահագործումից գեներացվող եկամուտների տնօրինմամբ: Դրանցից մի քանիսը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Պետություն	Կառավարվող ակտիվներ, մլրդ ԱՄՆ դոլար	Եկամտի աղբյուր
Նորվեգիա	1,122	Նավթ և գազ
Քաթար	345	Նավթ և գազ
ԱՄԷ	305	Նավթ և գազ
Ռուսաստան	174	Նավթ և գազ
Ղազախստան	58	Նավթ և գազ
ԱՄՆ	67.3	Նավթ և գազ
Չիլի	11	Պղինձ

Աղյուսակ 2-ում ներկայացված է 2018-2020թթ. Հայաստանում արտադրված գունավոր մետաղների և դրանց խտանյութերի ծավալները:

Տեղեկանք

2018-2020թթ. Հայաստանում արտադրված գունավոր մետաղների և դրանց խտանյութերի ծավալների մասին

Աղյուսակ 2

Արտադրատեսակ	Արտադրություն /հազ.տ/		
	2018թ.	2019թ.	2020թ.
Պղնձի խտանյութ	424.8	562.0	511.2
Մոլիբդենի խտանյութ	0.8	2.1	16.4
Ֆեռոմոլիբդեն	7.1	8.9	7.8

Նպատակ ունենալով համաշխարհային շուկայում ձևավորված բարձր գնային պահանջարկի պայմաններում Հայաստանի հանքարդյունաբերության և գունավոր մետալուրգիայի ոլորտում ստեղծել և զարգացնել առավել մաքուր և էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրություններ՝ առաջարկվում է պղնձի և մոլիբդենի միջազգային բարձր գների պարագայում սահմանել պետական տուրք պղնձի, մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի՝ դեպի երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (այսուհետ՝ լիցենզիա) տրամադրելու համար:

Ակնկալվում է, որ լիցենզիայի տրամադրման առաջարկվող դրույքաչափերը կգործեն միայն նշված մետաղների բարձր գնային միջակայքերում, իսկ հետագայում, կախված համաշխարհային շուկայում այդ մետաղների պահանջարկի փոփոխությունից (օրինակ՝ պղնձի բորսայական գնի 7.5 հազ. ԱՄՆ դոլարի շենք, իսկ մոլիբդենի պարագայում՝ 20 հազ. ԱՄՆ դոլարի շենք չգերազանցելու դեպքում՝ կվերանայվեն առաջարկվող դրույքաչափերը դեպի նվազում):

Աղյուսակ 3-ում ներկայացված է պղնձի ներկայիս գնային առաջարկի և արտահանման ծավալների պահպանման պարագայում արտահանման պետական տուրքի կանխատեսվող ծավալը, ինչպես նաև պղնձի խտանյութի արտահանման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքի կիրառման արդյունքում կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիի և շահութարկի վրա ազդեցության գնահատականը:

Աղյուսակ 3

Տեղեկանք

պղնձի խտանյութի արտահանման լիցենզիա տրամադրելու պարագայում պետական տուրքի կիրառման արդյունքում կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիի և շահութարկի վրա ազդեցության գնահատականի մասին

Ցուցանիշ	2020թ.	2021թ. մայիս	Աձ, %	Տարբերություն, ԱՄՆ դոլար
Պղնձի միջազգային գին, 1 տոննայի համար ԱՄՆ դոլար	6,176	10,191	65	4,015
Պղնձի խտանյութի արտահանում, հազար տոննա, ՀՀ ՎԿ	511.2			-
Պետական տուրքի կիրառման դեպքում դրամական մուտք, մլրդ դրամ				82
Շահութահարկի և ռոյալթիի վրա առավելագույն ազդեցություն, մլրդ դրամ				25
Պետական տուրքի կիրառման դեպքում դրամական մուտք՝ հաշվի առնելով շահութահարկի և ռոյալթիի վրա ազդեցությունը, մլրդ դրամ				57

Աղյուսակ 4-ում ներկայացված է մոլիբդենի ներկայիս գնային առաջարկի և արտահանման ծավալների պահպանման պարագայում արտահանման պետական տուրքի կանխատեսվող ծավալը, ինչպես նաև մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքի կիրառման արդյունքում կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիի և շահութարկի վրա ազդեցության գնահատականը:

Աղյուսակ 4

Տեղեկանք

Մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանման լիցենզիա տրամադրելու պարագայում պետական տուրքի կիրառման արդյունքում կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիի և շահութարկի վրա ազդեցության գնահատականի մասին

Ցուցանիշ	2020թ.	2021թ. մայիս	Աճ, %	Տարբերություն, ԱՄՆ դոլար
Մոլիբդենի միջազգային գին, 1 տոննայի համար ԱՄՆ դոլար	21,290	26,819	26	5,529
Մոլիբդենի հանքաքարի/խտանյութի արտահանում հազար տոննա, ՀՀ ՎԿ	16.4			
Ֆեռոմոլիբդենի արտահանում հազար տոննա, ՀՀ ՎԿ	7.8			
Պետական տուրքի կիրառման դեպքում դրամական մուտք, մլրդ դրամ				21
Շահութահարկի և ռոյալթիի վրա ազդեցություն, մլրդ դրամ				6
Պետական տուրքի կիրառման դեպքում դրամական մուտք՝ հաշվի առնելով շահութահարկի և ռոյալթիի վրա ազդեցությունը, մլրդ դրամ				15

3-րդ և 4-րդ աղյուսակներից պարզ է դառնում, որ ներկայիս պահպանվող Հայաստանից արտահանվող պղնձի և մոլիբդենի խտանյութի, ինչպես նաև մոլիբդենի միջազգային գների արտահանման ծավալների պահպանման պարագայում ընդհանուր առմամբ պետական տուրքի չափը կկազմի շուրջ 72 մլրդ դրամ, քանի որ պղնձի և մոլիբդենի խտանյութի, ինչպես նաև ֆեռոմոլիբդենի արտահանման լիցենզիա տրամադրելու պարագայում պետական տուրքի կիրառման արդյունքում կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիի և շահութարկը կնվազի համապատասխանաբար 25 և 6 մլրդ դրամով:

Արտահանման լիցենզիաների տրամադրման համար գանձվող պետական տուրքերի դրույթաչափը հաշվարկվել է ելնելով հետևյալ սկզբունքներից.

- Առաջարկվում է սահմանել պետական տուրք ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2603 00 000 0 ծածկագրին դասվող պղնձի խտահանքերի (կոնցենտրատ) դեպի երրորդ երկրներ արտահանման համար լիցենզիաների տրամադրման համար:

Պղնձի խտահանքի արտահանման համար լիցենզիայի տրամադրման պետական տուրքի չափը հաշվարկվել է ելնելով հետևյալ սկզբունքից.

Լոնդոն Մեթըլ Իքսչենջի բորսայի պղնձի միջազգային գին (9,200 ԱՄՆ դոլար 1 տոննայի համար) x արտահանվող 1տ.խտահանքում պղնձի պարունակություն (24-26%) x ԱՄՆ դոլարի փոխարժեքով x 15%: $9,200 \times 0.25 \times 490 \times 0.15 = 169,050$ դրամ

Պղնձի արտահանման համար լիցենզիայի տրամադրման պետական տուրքի չափը հաշվարկվել է ելնելով հետևյալ սկզբունքից.

Լոնդոն Մեթըլ Իքսչենջի բորսայի պղնձի միջազգային գին (9,200 ԱՄՆ դոլար 1 տոննայի համար) x ԱՄՆ դոլարի փոխարժեքով x 15%:

$$9,200 \times 490 \times 0.15 = 676,200 \text{ դրամ}$$

- ԱՏԳ ԱԱ 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր՝ երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ տրամադրելու համար.

Լոնդոն Մեթըլ Իքսչենջի բորսայի պղնձի միջազգային գին (24,000 ԱՄՆ դոլար 1 տոննայի համար) x արտահանվող խտահանքում մոլիբդենի պարունակություն (50-51%) x ԱՄՆ դոլարի փոխարժեքով x 15%:

$$24,000 \times 0.5 \times 490 \times 0.15 = 882,000 \text{ դրամ}$$

- ԱՏԳ ԱԱ 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի՝ երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ տրամադրելու համար բացառություն է սահմանվել ԱՏԳ ԱԱ 8102 97 000 ծածկագրին դասվող ապրանքի համար (մնացորդներ և ջարդոն), քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 15.3-րդ մասով սահմանված ԱՏԳ ԱԱ 8102 97 000 ծածկագրերին դասվող ապրանքի արտահանման համար արդեն իսկ սահմանված է պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Մոլիբդենի արտահանման համար լիցենզիայի տրամադրման պետական տուրքի չափը հաշվարկվել է ելնելով հետևյալ սկզբունքից.

Լոնդոն Մեթըլ Իքսչենջի բորսայի մոլիբդենի միջազգային գին (24,000 ԱՄՆ դոլար 1 տոննայի համար) x 60% (մոլիբդենի պարունակությունը արտահանվող ֆեռոմոլիբդենի մեջ) x ԱՄՆ դոլարի փոխարժեքով x 15%:

$$24,000 \times 0.6 \times 490 \times 0.15 = 1,058,400 \text{ դրամ}$$

Ներկայացվող իրավական կարգավորումները չեն հակասում Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթներին:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից նույնպես նախատեսվում է իրականացնել (մետաղների միջազգային բարձր գների պարագայում) քայլեր՝ ուղղված պետության եկամուտների ավելացման միջոցով երկրի տնտեսության ոլորտների զարգացմանը, մասնավորապես՝ Ռուսաստանի Ղաշնությունում նախատեսվում է ս.թ. օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կիրառել, գունավոր և սև մետաղների, ինչպես նաև դրանցից պատրաստված

արտադրատեսակների համար արտահանման պետական տուրքեր, որոնց գումարները կուղղվեն պետության կողմից ենթակառուցվածքային ծրագրերի զարգացմանը:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա, իսկ պետական բյուջեում նախատեսում է եկամուտների ավելացում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ լիցենզիաների տրամադրման կարգի և պայմանների վերաբերյալ: ՀՀ Ազգային ժողովի կողմից սույն օրենքի ընդունման և այն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Հաշվի առնելով հարցի հրատապությունը՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft) քննարկման չի դրվել (ուստի բացակայում է համապատասխան տեղեկանքը):

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակում ու իրականացում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Մաքուր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ հանքարդյունաբերության և գունավոր մետալուրգիական ոլորտների հեռանկարային զարգացում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ հաշվի առնելով շահագրգիռ պետական մարմինների դիրքորոշումները:

5. Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա համաշխարհային շուկայում ձևավորված գունավոր մետաղների բարենպաստ գների պարագայում կուտակել ֆինանսական միջոցներ և օգտագործել հանրապետությունում հանքարդյունաբերության և գունավոր մետալուրգիայի ոլորտների միջազգային չափանիշներին համապատասխանող, (նորարարական ան տեխնոլոգիաների կիրառմամբ) էկոլոգիապես անվտանգ արտադրությունների ստեղծմանը և զարգացմանը:

6. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)